ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2025 թվականի № 107-Ա

ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի 2025 թվականի մարտի 24-ի № Ն/340-2025 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Ստեփան Բաղդասարյանին*** 2025 թվականի մարտի 25-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ալափարսի միջնակարգ դպրոց» և «Արագյուղի «Տիգրանակերտ կրթարան» միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր տեղերի հավակնորդների հետ հարցազրույց անցկացնող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. ***Ստեփան Բաղդասարյանի*** գործուղման վայր փոխադրումը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում գտնվող ***«TOYOTA LAND CRUISER PRADO 2.7 l»*** մակնիշի ***827 CZ 61*** ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)՝* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի մարտի 24
ք. Հրազդան